



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ**

<<04>> <<սեպտեմբեր >> 2017 թ

N 101

ք. Եղեգնաձոր

Կ Ա Ր Գ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
**ԱՐՍԵՆ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՀՀ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՉԻՎԱՅԻ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՀԱՆՐԱԿԻՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 12-րդ հոդվածի 1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319-Ն որոշմամբ հաստատված կարգի 28.1-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար փոխվարչապետի 02/01.4/2747-17 գրությունը.

Կ Ա Ր Գ Ա Գ Ր ՈՒՄ ԵՄ

1. 2017 թվականի սեպտեմբերի 4-ից Արսեն Ասատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Չիվայի միջնակարգ դպրոց հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրեն, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 (հինգ) տարի ժամկետով:
2. 2017 թվականի սեպտեմբերի 4-ից լուծել Արսեն Ասատրյանի հետ կնքած 2016 թվականի հոկտեմբերի 14-ի N308 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ.ՍԱՐԳՍՅԱՆ